Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նորայր Նազարյան,
«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրեն:

2. Գործուղման վայրը և ժամկետները

Իտալիա, Ավստրիա, Շվեյցարիա, Գերմանիա, Իսպանիա
2026 թվականի ապրիլի 26-ից մինչև մայիսի 18-ը:

3. Հրավիրող կողմը

Festival Pianistico
Konzert Geselschaft
Auftakt Music Production
Segura Management.S.L.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Եվրոպական մեծ շրջագայություն՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակին, որի նպատակն էր Հայաստանի ազգային մշակույթի միջազգային ներկայացումը և հանրահռչակումը, նվագախմբի գեղարվեստական մակարդակի և ստեղծագործական ներուժի ցուցադրումը եվրոպական առաջատար համերգային հարթակներում: Շրջագայությունը միտված էր նաև նվագախմբի միջազգային հեղինակության բարձրացմանը, համերգային գործունեության աշխարհագրության ընդլայնմանը և երկարաժամկետ մշակութային ծրագրերի ձևավորմանը եվրոպական տարբեր երկրներում:

5. Քննարկված թեմաները

Նվագախմբի միջազգային դիրքավորում, հեղինակության և գործընկերային կապերի ամրապնդում, ինչպես նաև միջազգային համագործակցությունների ընդլայնման նպատակով նոր բանակցությունների նախաձեռնում և զարգացման ուղղությունների քննարկում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջազգային մշակութային երկարաժամկետ համագործակցությունների ամրապնդում եվրոպական հեղինակավոր համերգասրահների և փառատոնների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ «Հոնկոնգ միջազգային փառատոն»- ի գեղարվեստական ղեկավարի հետ հետագա համագործակցության վերաբերյալ: «Asconas Holt» արվեստի կառավարման միջազգային գործակալության ներկայացուցիչների հետ քննարկվել և նախանշվել են առաջիկա համերգային ծրագրերի կազմակերպման հնարավորությունները Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

2027-2028թթ. համերգաշրջանի շրջանակներում շարունակել և ընդլայնել եվրոպական շրջագայության ընթացքում ձևավորված համագործակցությունները՝ գործընկեր կազմակերպությունների և մշակութային կառույցների հետ հետագա աշխատանքային քննարկումների, պաշտոնական նամակագրության և համատեղ ծրագրերի մշակման միջոցով: Ակնկալվող արդյունք՝ նոր միջազգային համերգային ծրագրերի, հյուրախաղերի և մշակութային նախագծերի իրականացում եվրոպական մի շարք երկրներում, այդ թվում՝ Ֆրանսիայում և Իսպանիում, ինչպես նաև ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և Հոնկոնգում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

22. 05. 2026թ.